ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք. Երևան **«18» Մայիսի 2018թ.**

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտը, ի դեմս ռեկտոր Վ.Բ.Առաքելյանի (այսուհետ՝ Ինստիտուտ), որը գործում է ինստիտուտի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և Ավանդական բժշկության համալսարանը, ի դեմս ռեկտոր Ն.Խ.Սարիբեկյանի, (այսուհետ՝ Համալսարան), որը գործում է Համալսարանի կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ միասին՝ Կողմեր), բարձր գնահատելով գործընկերությունը, համագործակցությունը կրթական, գործնական և մշակութային ոլորտներում, զարգացնելու համար արդեն հաստատված համագործակցությունը՝ կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1.ՆՊԱՏԱԿԸ

Սույն պայմանագրի հիմնական նպատակն է Ինստիտուտի և Համալսարանի միջև հաստատել գործընկերային հարաբերություններ, որոնք կնպաստեն երկու ուսումնական հաստատությունների միջև կրթական, մշակութային արդեն գոյություն ունեցող հարաբերությունների զարգացմանը:

2.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

2.1. Սույն պայմանագրով Կողմերը նկատի ունենալով իրենց միջև ուսումնական, գիտական գործունեության փոխգործակցության առավել զարգացման անհրաժեշտությունը, նախատեսում են համագործակցել պայմանագրի 2-րդ կետի 2.2. ենթակետով նախատեսված ուղղություններով՝ իրենց հնարավորությունների, միջոցների և փորձի կիրառմամբ, որը հնարավորություն կտա նոր հեռանկարներ բացել կրթության ոլորտում երկկողմանի համագործակցության համար:

2.2. Կողմերը պարտավորվում են փոխադարձաբար իրականացնել.

1) համատեղ կրթական ծրագրերի մշակում և իրականացում,
2) ուսանողների փոխանակում առարկայական դասընթացների շրջանակներում,
3) դասախոսների փոխանակում,
4) համատեղ ուսումնական և լաբորատոր բազաների օգտագործում,
5) համատեղ գիտական հետազոտական ծրագրերի կազմակերպում,
6) համատեղ միջազգային և տեղական կոնֆերանսների, սեմինարների կազմակերպում:

3. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3.1.Պայմանագրի դրույթների շրջանակում՝ երկկողմանի շահերից ելնելով Կողմերը հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կողմից վարվող կրթության ոլորտի քաղաքականության առաջնայնությունները՝ պայմանավորվեցին՝ զարգացնել իրենց համագործակցությունը հետևյալ ուղղություններով.

3.1.1 Համագործակցություն կրթական ծրագրերի համատեղ մշակման ոլորտում:

3.1.2. Գիտական, մասնագիտական գրականության, մեթոդական ձեռնարկների, աշխատությունների, պարբերականների և այլ նյութերի փոխանակման իրականացում: Կողմերը համատեղ կիրականացնեն գիտաժողովներ, սեմինարներ, նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ հետազոտական աշխատանքներ:

3.1.3. Ինովացիոն, դրամաշնորհային ծրագրերի համատեղ իրականացում: Համատեղ իրականացվող աշխատանքների արդյունքների, դրանց խոչընդոտող հանգամանքների մասին տեղեկատվություն հայցելու և ստանալու, երկկողմանի հետաքրքրություն ներկայացնող՝ գործող օրենսդրության շրջանակներում Կողմերի գործունեությանը և մասնագիտացմանն առնչվող գիտագործնական, ինչպես նաև մասնագիտական և կազմակերպական բնույթի այլ ուղղություններով:

4.ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կողմերը պարտավորվում են ձեռնարկել բոլոր միջոցները սույն պայմանագրով ստանձնած իրենց պարտականությունները բարեխղճորեն, Կողմերի միջև համաձայնեցված ժամկետներում կատարելու համար:

5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

5.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման օրվանից և գործում է 5 տարի ժամկետով:

5.2. Սույն պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ՝ ենթադրվող դադարեցման օրվանից ոչ ուշ, քան 1 (մեկ) ամիս առաջ մյուս Կողմին գրավոր ծանուցմամբ:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով նախատեսված պարտականություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության 3 հետևանքով, որը ծագել է հուշագիրը կնքելուց հետո և Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են՝ երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն հուշագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել սույն հուշագիրը՝ այդ մասին նախապես տեղեկացնելով մյուս Կողմին:

7. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

Սույն պայմանագրի և դրա հիման վրա Կողմերի միջև կնքվող առանձին համաձայնագրերի կատարման ընթացքում առաջացած վեճերն ու տարաձայնությունները

լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

8. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ և համարվում են դրա անբաժանելի մասը:

8.2. Սույն պայմանագիրը կողմերից ոչ մեկի համար ֆինանսական պարտավորություններ չի առաջացնում: Կողմերի կողմից սույն պայմանագրից բխող աշխատանքների և գործառույթների իրականացումը արտացոլվում է տարեկան գործողությունների (միջոցառումների) ծրագրում, որի հիման վրա կազմվում են կողմերի համար ֆինանսական պարտավորություններ առաջացնող համաձայնագրեր:

8.3. Սույն պայմանագրով չնախատեսված հարցերը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

8.4.Սույն պայմանագրով ստանձնած պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կողմերը կրում են պատասխանատվություն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

8.5. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

ԻՆՍՏԻՏՈՒՏ	ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» Հիմնադրամ, Ք. Երևան, Ալեք Մանուկյան 11, Հեռ. (+374)10 556281, Ֆաքս (3741) 55-41-04 Էլ.հասցե: **info@asipc.am** ՀԷԲ Մյասնիկյանի մասնաճյուղ h/h 038103145163, ՀՎՀՀ 01505821	«Ավանդական բժշկության համալսարան» ԱԿ Ք.Երևան, 0040 Ավան, Մ.Բաբաջանյան 38, *Հեռ.* (+374) 10 616290, (+374) 10 616470 Էլ. հասցե: tradmeduni@mail.ru, unitradmed.info@gmail.com Կոնվերսբանկ 19300 h/h 07387010100, ՀՎՀՀ 00806709
Ռեկտոր Վ.Ք.Առաքելյան	**Ռեկտոր Ն.Խ.Սարիբեկյան**
_____ (ստորագրություն)	_____ (ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.